ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 5, 1952 Общественные науки

Հ. Կարապետյան

ՄԻ ԷՋ ՄԱՅԻՍՅԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Հայ ժողովրդի բազմադարյան պատմությունը հարուստ է առատագրական պայքարի բազմաթիվ փառավոր էջերով։ Սակայն, այդ պայքարը հաղթանակով պսակվեց և հայ ժողովուրդն իր պետականությունը վերականգնեց ու ազգային վերածննդի հնարավորություն ստացավ միայն Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլուցիայի միջոցով, ռուս մեծ ժողովրդի եղբայրական օգնությամբ։ Հայ ժողովրդի ազատագրումը սերտ կերպով կապվեց Հոկտեմբերյան ռևոլուցիայի հետ, «միայն Սովետական իշխանության գաղափարը Հայաստանին բերեց խաղաղություն և ազգային վերածննդի հնարավորություն»[1]։

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլուցիայից անմիջապես հետո, Հայաստանի բանվորները, գինվորները և աշխատավոր գյուղացիները, Անդրկովկասի մյուս ժողովուրդների աշխատավորության հետ միասին, բոլշևիկների պարտիայի ղեկավարությամբ, պայքար ծավալեցին երկրում սովետական կարգեր հաստատելու համար։ Սակայն, հայ ժողովրդի նողկալի թշնամի դաշնակները և Անդրկովկասի ամբողջ կոնտրռևոլուցիան բլոկ կազմած, կատարելով իրենց տերերի կամքը, աշխատավոր դասակարգերի շահերին հակառակ, Անդրկովկասը անջատեցին Սովետական Ռուսաստանից ու հաստատեցին իրենց արյունոտ տիրապետությունը։

Դաշնակների տիրապետության տարիները՝ 1918—1920 թվականները հայ ժողովրդի պատմության ամենամռայլ էջերն են։ Հայ ժողովուրդն իր դարավոր պատմության ընթացքում երբեք այնպիսի ծայր աստիճանի ծանր, ճակատագրական ու ողբալի ժամանակաշրջան չէր ապրել, ինչպես ապրեց հայ աշխատավորների ոխերիմ թշնամի դաշնակների կարճատև, տխրահռչակ տիրապետության տարիներին։

Ստեղծված ծանր դրությունից դուրս գալու միակ ելքը դաշնակների տիրապետության տապալման, անգլո-ամերիկյան իմպերիալիստներին երկրից վռնդելու և Հայաստանում սովետական կարգեր հաստատելու մեջ էր։

Հայ աշխատավոր ժողովուրդը իր ազատությունը սպասում էր միայն և միայն Սովետական Ռուսաստանից։ 1919 թ. վերջերին և 1920 թ. սկզբներին սովետական իշխանության տարած աննախընթաց հաղթանակները ներքին և արտաքին թշնամիների դեմ, դենիկինյան հրոսակախմբերի ջախջախման ստալինյան պլանի իրականացումը, Ուկրաինայի և Հյուսիսային Կովկասի ազատագրումը, 1920 թ. սովետական զինված ուժերի ընդհուպ մոտեցումը Անդրկովկասին, այդ բոլորը մեծ թափ հաղորդեցին Հայաստանի աշխատավորության ռևոլուցիոնացմանը. Հայաստանի աշխատավորները, Անդրկովկասի բոլոր ժողովուրդները ակտիվ պայքարի դուրս

---

[1] *Ի. Վ. Ստալին, Երկեր, հ. 4, էջ 438։*

եկան հանուն իրենց ազատության, ընդդեմ «ազգային կառավարությունների», ընդդեմ դաշնակների, մենշևիկների և մուսավաթիստների։

Ադրբեջանի աշխատավորները Բաքվի պրոլետարիատի գլխավորությամբ, 1920 թ. ապրիլի լույս 28-ի գիշերը ապստամբվեցին և Կարմիր Բանակի օգնությամբ տապալեցին մուսավաթիստների բուրժուա-խանական-նացիոնալիստական տիրապետությունը և Ադրբեջանում հաստատեցին սովետական իշխանություն։

Հայաստանի աշխատավորները ջերմորեն ողջունեցին Ադրբեջանի բանվորների ու գյուղացիների պատմական մեծագույն հաղթանակը։ Նրանք Ադրբեջանի աշխատավորների օրինակով պայքար ծավալեցին ներքին և արտաքին ճնշումից ազատագրվելու, Ռուսաստանի ժողովուրդների հետ իրենց եղբայրական կապերը վերականգնելու համար։

Հայաստանի բանվորների, զինվորների և աշխատավոր գյուղացիների պայքարը հանուն սովետական կարգերի հաստատման, ավելի ցայտուն կերպով դրսևորվեց 1920 թվականի մայիսի 1-ին՝ երկրի բազմաթիվ վայրերում տեղի ունեցած ցույցերի ժամանակ։

Ալեքսանդրապոլում, Կարսում, Երևանում, Սարիղամիշում, Հարթլիսայում և մյուս վայրերում տեղի ունեցած մայիսմեկյան մարտական ցույցերը արտահայտում էին Հայաստանի աշխատավորների եղբայրական համակրանքը դեպի ռուս մեծ ժողովուրդը, դեպի հոկտեմբերյան ռևոլուցիան, դեպի ադրբեջանական եղբայրական ժողովուրդը։

1920 թ. գարնանը երկրում ստեղծված ռևոլուցիոն սիտուացիան փոխվեց ապստամբության։ Մայիսի մեկից հետո Ալեքսանդրապոլում, Սարիղամիշում, Կարսում, Նոր-Բայազետում, Ղազախ-Շամշադինում և մյուս վայրերում ապստամբություններ բռնկվեցին ընդդեմ հայ ժողովրդի դահիճ դաշնակների, ընդդեմ նրանց արյունոտ տիրապետության, ընդդեմ անգլո-ամերիկյան գաղութարարների։

* * *

Մայիսյան ապստամբության պատմության փառավոր էջերից մեկն է հանդիսանում Կարսի ապստամբությունը։

Ամբողջ Հայաստանում, այդ թվում և Կարսում, 1920 թվականի ապրիլից քաղաքական դրությունը ավելի է սրվում, ավելի է խորանում Հայաստանի աշխատավորական լայն մասսաների ռևոլուցիոնացումը, ավելի բացահայտորեն է արտահայտվում աշխատավորների ատելությունը դեպի կոնտրռևոլուցիոն դաշնակները և նրանց հակաժողովրդական ռեժիմը։ Մյուս կողմից ավելի ու ավելի է բարձրանում Հայաստանի կոմունիստական պարտիայի հեղինակությունը աշխատավորական լայն խավերի մեջ։ Դաշնակները զգում են, որ իրենց ոտքի տակի հողը արդեն գնում է։ Ինչպես Ալեքսանդրապոլի, Սարիղամիշի և մյուս վայրերի, այնպես էլ Կարսի կայազորի ու մյուս զորամասերի զինվորների բացարձակ գերակշռող մասը համակված էր հակադաշնակցական տրամադրություններով։ Զինվորների մեջ կատարվող քաղաքական-մասսայական աշխատանքի շնորհիվ նրանց գիտակից մասը մտնում էր կոմունիստական պարտիայի շարքերը։ Զինվորական մասերում ստեղծվել էին կոմունիստական բջիջներ, որոնք զգալի աշխատանք էին կատարում զինվորների մեջ։ Զինվորների հիմնական մասը

չէր կատարում հրամանատարների կարգադրությունները։ Զինվորների ըմբոստ ելույթները ընդդեմ հրամանատարության ավելի հաճախակի էր դարձել։ Դաշնակների ու ռեակցիոն սպայության կողմից գործադրվող ահարեկումներն ու հալածանքները ավելի էին բորբոքել զինվորների ատելությունը տիրող ռեժիմի դեմ։

Մինչև մայիսյան ապստամբությունը՝ մի շարք զորամասերում՝ Սարիղամիշում, Դիլիջանում, Բասարգեչարում, Դորիսում և այլ վայրերում տեղի են ունենում զինվորների կազմակերպված ելույթներ ընդդեմ տիրող կարգերի։

Ադրբեջանում սովետական իշխանության հաստատման լուրը և Կարմիր Բանակի մուտքը Անդրկովկաս, էլ ավելի է ոգևորում Հայաստանի բանվորներին, գյուղացիներին և զինվորներին, նրանց մղում է ռևոլուցիոն ակտիվ պայքարի։

Կարսի բանվորներն ու զինվորները մեծ եռանդով նախապատրաստվում են մայիսմեկյան ցույցերին։ Դաղաքի աշխատավորների մեջ կատարվող քաղաքական-մասսայական աշխատանքը մեծ ծավալ է ստանում։ Ապրիլի վերջերին Երևանից Կարս է գալիս Հայաստանի Կոմունիստական Պարտիայի Կենտկոմի (Արմենկոմի) ներկայացուցիչ Ղուկաս Ղուկասյանը, որը անմիջապես անցնում է գործնական աշխատանքի։

Կարսի աշխատավորների պայքարը հանուն սովետական իշխանության, նրանց վճռականությունը դաշնակների մարիոնետային «կառավարությունը» տապալելու գործում, ավելի պարզորոշ է դառնում մայիսմեկյան ցույցի ժամանակ։ Ցուցարարները բացառապես գնում են բոլշևիկների ետևից, բոլշևիկյան լոզունգներով։ Դաշնակներն անգամ ստիպված էին խոստովանել, որ մասսաները գնում են բոլշևիկների ետևից, որ բոլշևիկները իրագրության տերն են։ Դաշնակներն իրենք խոստովանում էին, որ բոլշևիկները իրենց զգում են թևավորված և գործում են համարձակ։

Կարսի բանվորներն ու զինվորները սպասում էին ապստամբության ազդանշանի։

Կարսի կոմունիստական կազմակերպության ակտիվի մայիսի 6-ի նիստում քննության է առնվում ապստամբության հարցը։ Նիստում զեկուցումով հանդես է գալիս Ղուկաս Ղուկասյանը, որը պարտիական կազմակերպությանը դիրքորոշում է դեպի ապստամբություն։ Նիստը միջոցառումներ է մշակում ապստամբությունը նախապատրաստելու, այն հաղթանակով առաջ տանելու ուղղությամբ և ընդունում է մարտական որոշում։ Մայիսի 7-ին Ալեքսանդրապոլում կապիտան Ս. Մուսայելյանի զրահագնացքում գումարվում է խորհրդակցություն, որտեղ կազմվում է Հայաստանի Ռազմա-ռևոլուցիոն Կոմիտե։ Այդ խորհրդակցությանը ներկա է լինում նաև Ղուկաս Ղուկասյանը։

Ռազմա-ռևոլուցիոն Կոմիտեն որոշում է Ալեքսանդրապոլում և Կարսում ապստամբություն սկսել միաժամանակ, մայիսի 9—10-ին։ Ալեքսանդրապոլից Կարս վերադառնալով, Ղուկաս Ղուկասյանը գործնական միջոցառումներ է ձեռնարկում Ռազմա-ռևոլուցիոն Կոմիտեի դիրեկտիվները կատարելու համար։ Մայիսի 8-ին կազմակերպվում է Կարսի Ռազմա-ռևոլուցիոն Կոմիտեն, որն իր ձեռքն է վերցնում ապստամբության կազմակերպման ղեկավարությունը, իսկ երկու օրից հետո՝ նաև իշխանությունը։

Ռևկոմի գլուխն է կանգնում Ղուկաս Ղուկասյանը, որը գլխավորում է զինվորական ու պարտիական ամբողջ գործը։

Մինչև ապստամբությունը դաշնակները փորձում են քաղաքի աշխատավորներին, մանավանդ զինվորներին հեռու պահել կոմունիստների ազդեցությունից։ Նրանք դիմում են ամեն տեսակ ստոր միջոցների, պրովոկացիաների, նպատակ ունենալով հեռու պահել զինվորներին ապստամբությունից և նրանց միջոցով խեղդել ապստամբական յուրաքանչյուր փորձ։ Սակայն այդ նրանց չի հաջողվում։ Մի քանի օրից հետո դաշնակները և կայազորի հրամանատարությունը արդեն խոստովանում էին, որ մայիսի 10-ին իրենց տրամադրության տակ լիովին վստահելի ոչ մի զորամաս չկար, որ զինվորների տրամադրությունը, չնչին բացառությամբ, հակադաշնակցական էր, նրանք կատարում էին միմիայն Ռևկոմի հրահանգները։

Մայիսի 10-ին ապստամբում է Ալեքսանդրապոլը։ Նույն օրը ապստամբում են նաև Կարսի բանվորներն ու զինվորները, իշխանությունը անցնում է Ռևկոմի ձեռքը։ Կոնտրռևոլուցիան ի վիճակի չի լինում կասեցնել ապստամբությունը, որը արագորեն ծավալվում է։

Ապստամբ ուժերի ավանգարդումն էին գարաժի և երկաթուղու բանվորները, նրանց հետևում էին կայազորի զինվորները և քաղաքի մյուս աշխատավորները։ Ապստամբությանը ակտիվ կերպով մասնակցում են Կարսի ամրոցի զինվորները, պարետային վաշտը, առաջին գնդի զինվորները, ինչպես նաև 5-րդ գունդը, որը մայիսի 10-ի իր միտինգում որոշում է պաշտպանել Ռևկոմի իշխանությունը և գնդի հրամանատարությունը հայտնում է Ռևկոմին իր պատրաստակամությունը՝ կատարելու նրա բոլոր կարգադրությունները։

Այդպիսով, քաղաքի ամբողջ բանվորները, կայազորի զինվորները և կրտսեր սպայական կազմի գերակշռող մասը գնում են բոլշևիկների նեռից և հանդիսանում են Կարսի ապստամբության հիմնական ուժը։

Ապստամբները գրավում են փոստ-հեռագրատունը, երկաթուղային կայարանը, ավտոգարաժը և այլ կարևոր օբյեկտներ։ Ռազմա-ռևոլուցիոն Կոմիտեի հսկողության տակ է անցնում Կարսի Ամրոցը իր կայազորով և քաղաքի զգալի մասը։ Ռևկոմը վերջնագրով պահանջում է Կարսի նահանգապետից և քաղաքի մնացած հիմարկներից ու զինվորական հրամանատարությունից՝ անվերապահորեն ենթարկվել Ռևկոմի իշխանությանը։ Թշնամին հարկադրված, առանց առարկությունների համաձայնում է ենթարկվել Ռևկոմի կարգադրություններին, սակայն իրականում նա ձգտում է քողարկել իր իսկական նպատակները։

Կարսի կայազորի հրամանատարը դաշնակցական բանակի հրամանատարին ուղղած գաղտնի հաղորդման մեջ քաղաքում տիրող դրության մասին գրում է. «Մայիսի 10-ին սկսվեց բոլշևիկյան հեղաշրջում։ Զինվորների տրամադրությունը փոքր բացառությամբ հակակառավարական էր։ Կարսի Հեղկոմը կարգադրություններ է արել, որոնք զինվորների կողմից կատարվում են։ Այդ հանդամանքը գրկում էր ինձ բացարձակ ուժով գործելուց»[1]։

[1] ՀՍՍՌ ՊԿԱ, ֆ. 68/200, գ. 792, թ. 4։

Թշնամին չի թաքցնում նաև, որ ոչ միայն զորքը, այլև միլիցիայի շարքային կազմը հիմնականում տրամադրված էր բոլշևիկորեն, և գնում էր աշխատավոր ժողովրդի ու զորքի հետևից[1]։

Ապստամբությունը կազմակերպող Ռևկոմը, սակայն, թույլ է տալիս մի շարք սխալներ։

Իշխանությունը Ռևկոմի ձեռքն անցնելուց հետո, չեն մեկուսացվում ոչ կայազորի հրամանատարությունը, ոչ կոնտրռևոլուցիոն սպայական կազմը։ Չեն մեկուսացվում դաշնակ կառավարական գործիչներն ու աչքի ընկնող թշնամական տարրերը։ Ռևկոմը չի գրավում քաղաքի այն մասը, որտեղ թշնամին բուն էր դրել և պլաններ էր մշակում ապստամբների դեմ։ Ապստամբները չեն գրավում մի շարք հիմնարկներ, որոնք կարևոր էին. պատասխանատու պոստերում նստած զգալի թվով դաշնակներ պաշտոնազուրկ չեն արվում, չեն փոխարինվում Ռևկոմի ներկայացուցիչներով։ Ռևկոմը հապաղում է իր թիկունքում գործող թշնամուն ջախջախելու գործում։

Ժողովրդի կատաղի թշնամի երեք գործիչներ, որոնք ձերբակալված էին, Ալեքսանդրապոլից ստացված կարգադրության համաձայն ազատ են արձակվում։ Հայաստանի Ռազմա-ռևոլուցիոն Կոմիտեն հետագայում որպես ժողովրդի թշնամիներ մերկացված մի քանի մարդկանց ճնշման տակ Ալեքպոլից դիրեկտիվ է տալիս ոչ մի ձերբակալություն չկատարել, ռեպրեսիվ միջոցների չդիմել, ինչպես այդ չէր կատարվում նաև Ալեքսանդրապոլում։

Մինչդեռ Ռևկոմը Ալեքսանդրապոլից սպասում էր օգնության և նոր դիրեկտիվների, կոնտրռևոլուցիան գործում է։ Մայիսի 10-ին Ռևկոմի կողմից չմեկուսացված կայազորի հրամանատարը խորհրդակցություն է ունենում տապալված իշխանության նահանգապետի և դաշնակցական կառավարության արտակարգ լիազորի հետ, որոշվում է՝ առանց առարկումների ընդունել Ռևկոմի վերջնագիրը և ժամանակավորապես բոլշևիկների դեմ ակտիվ, բացարձակ գործողությունների չդիմել, այլ օգտագործել ստեղծված հնարավորությունները, ամուր բունդք ստեղծել և նախապատրաստվել հետագայում հանդես գալու համար։ Հրանգվում է կոնտրռևոլուցիոն սպայությանը, դաշնակ գործիչներին և պետական պաշտոնեությանը՝ մինչև վերջ մնալ իրենց գրված պոստերում և կատարել վարկաբեկիչ պրովոկացիոն աշխատանք ապստամբական ուժերը քայքայելու և քաղաքի մանր բուրժուազիային, առևտրականներին ու հետասնաց տարրերին սովետական իշխանության դեմ գրգռելու համար։

Մայիսի 11-ին դաշնակները կազմակերպելով մի խումբ մաուզերիստների և անցնելով պրովոկացիայի ենթարկված անկազմակերպ ամբոխի գլուխ, փորձում են ոչնչացնել ապստամբներին։ Նրանք նախ շարժվում են դեպի Ռևկոմի շենքը, որպեսզի շոշափեն նրա ուժերը և հնարավորության դեպքում վերականգնեն տապալված իշխանությունը։ Կոնտրռևոլուցիայի այդ փորձը խիստ հակահարված է ստանում։ Դաշնակները որոշում են ավելի պատրաստված հանդես գալ։ Ի նկատի ունենալով, որ բոլշևիկների դիրքը քաղաքային ավտոգարաժում պաշտպանված էր շատ գընդացիրներով և մեծ թվով զինվորներով,—գրել է այդ մասին գեներալ Փի-

[1] Համկ(բ)Պ Կենտկոմին կից Մարքսի—Էնգելսի—Լենինի Ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 16, գ. 1, թ. 19։

ռումովը,— և որ կառավարական զինվորների տրամադրությունը տատանվում էր, բացահայտ ուժով ցերեկը գրոհել բոլշևիկներին անհնարին էր։ Ենթադրվում էր, գրոհը կատարել գիշերը»[1]։

Ալեքսանդրապոլից սպասվող օգնությունը ուշանում է։ Ռևկոմը սպասողական քաղաքականություն է վարում, թշնամուն ջախջախելու գործնական քայլերի չի ձեռնարկում։

Կարսի բանվորների և զինվորների հերոսական պայքարին անհրաժեշտ մասնակցություն չի ցուցաբերում նահանգի գյուղացիությունը։ Այդ բացատրվում է նրանով, որ մինչև ապստամբությունը գյուղում անհրաժեշտ քաղաքական-մասսայական աշխատանք չէր կատարվել։ Ապստամբությունը թեև քաղաքում հաղթում է, բայց այն քաղաքի շրջանակներից դուրս չի գալիս։ Չնայած դրան, գյուղացիների առաջավոր մասը, այդ թվում նաև ազգային փոքրամասնությունների աշխատավորները, մասնավորապես Կարսի շրջակայքում, պատրաստակամություն են ցուցաբերում սովետական իշխանությանը օգնելու համար։ Ռուս ազգային փոքրամասնության ներկայացուցիչները նույնիսկ մի կոչով դիմում են ազգաբնակչությանը և կոչ անում՝ կազմակերպել մարտական խմբեր, օգնել ռևոլուցիոն իշխանությանը։

Մայիսի 11-ին հակառակորդը կազմակերպում է գիշերային հարձակում։ Նա հավաքում է մի քանի տասնյակ տատանվող զինվորներ, միլիցիային, տեղի մաուզերիստներին և մայիսի լույս 12-ի գիշերը հարձակվում է կայարանի վրա ու գրավում այն։ Դաշնակների պլանն էր՝ շարունակելով հարձակումը՝ գրավել նաև ապստամբների շտաբը, սակայն հարձակումը ետ է մղվում։

Մայիսի 12-ից Կարսի ապստամբների համար ստեղծվում է կրիտիկական մոմենտ. դրսից օգնություն չի գալիս, իսկ քաղաքում ստեղծվում է, այսպես կոչված, երկիշխանություն։ Համարձակ գործողությունների անցնելու մոմենտը Ռևկոմը ձեռքից բաց էր թողել։ Թշնամին, օգտվելով ապստամբ ուժերի համար ստեղծված աննպաստ իրադրությունից, պատրաստվում է նոր հարձակման։

Ստեղծված իրադրության պայմաններում Ռևկոմը որոշում է փոխադրվել Ամրոց։ Մայիսի 12-ին ապստամբները կենտրոնանում են Ամրոցում։

Զինված ուժով գրավել Ամրոցը, դաշնակների համար անհնարին էր, ուստի նրանք որոշում են առաջ քշել ամբոխին՝ կանանց, երեխաներին և այլն, իսկ նրանց ետևից քողարկված, շարժել զինված ուժը։ Ապստամբները անզեն քաղաքացիների, երեխաների ու կանանց վրա կրակ բաց չեն անում, նրանք հրանոթային մի քանի ոչ նշանառու կրակով վախեցնում են ամբոխին՝ հետ քաշվելու համար։

Դաշնակների այդ խորամանկությունը ևս հաջողություն չի ունենում, բայց կոնտրռևոլուցիան օգակում է ապստամբներին Ամրոցում։ Կապը դրսի հետ, առաջին հերթին Ալեքսանդրապոլի և Սարիղամիշի հետ, կտրվում է։ Դաշնակները որոշ վայրերում քանդում են Սարիղամիշ—Կարս երկաթուղին, որպեսզի կանխեն Սարիղամիշից ապստամբներին սպասվող օգնությունը։ Ապստամբները սննդամթերքի մեծ կարիք էին զգում, իսկ

[1] Հայկական ՍՍՌ ՊԿԱ, ֆ. 68 200, գ. 792, էջ 4։

ջրի պակասը կրիտիկական դրություն էր ստեղծել, որը գնալով սրվում էր։ Ստեղծված ծանր դրությունը օգտագործում են զորամասի շարքերից չմաքրված ռեակցիոն սպաները և քայքայիչ աշխատանք կատարում զինվորների մեջ։

Դրսից ոչ մի օգնություն չստանալով, գտնվելով լրիվ օղակման և մեկուսացման վտանգի տակ, հաշվի առնելով ստեղծված դժվարությունները, Ռևկոմը որոշում է նահանջել դեպի Ալեքսանդրապոլ։

Մայիսի լույս 13-ի գիշերը ապստամբության ղեկավարները, թվով 27 հոգի, Զախմախ գյուղի ուղղությամբ ճեղքում են օղակը և դուրս են գալիս Ամրոցից։ Զախմախում գյուղացիները նրանց կերակրում են, որից հետո ապստամբներն ուղղություն են վերցնում դեպի Մազրա գյուղը, նպատակ ունենալով այդ ճանապարհով անցնել Ալեքսանդրապոլ։ Ապըստամբներն իրենց նահանջի ճանապարհին մի քանի տեղ զինված ընդհարում են ունենում հակառակորդի ուժերի հետ։ Այդպիսի մարտ ապըստամբները ունենում են նաև Մազրա գյուղի մաուզերիստների հետ, որոնք խմբապետ քահանայի ղեկավարությամբ ուզում էին կտրել ապըստամբների նահանջի ճանապարհը։ Քահանայի բանդան չի դիմանում ապըստամբների ճնշմանը և նահանջում է, բաց անելով ապստամբների ճանապարհը։ Երկրորդ ընդհարումը տեղի է ունենում Բաշկադիքլար կայարանի մոտերքը։ Այսպիսով, ապստամբները ոտքով, սննդամթերքի բացակայության պայմաններում, չափից դուրս հոգնած, պայքարով ճանապարհ են հարթում և հասնում Արգինե գյուղի ջրաղացների մոտ։

Մինչ այդ՝ դաշնակները սկսում են որսալ Կարսում՝ նահանջի հնարավորությունից զրկված կոմունիստներին ու նրանց համակրողներին, իսկ մյուս կողմից՝ կազմակերպել նահանջող ապստամբների հետապնդումը։ Մոտ յոթանասուն մաուզերիստ, երկու բեռնատար ավտոմեքենաներով, Արգինե գյուղի ջրաղացների մոտ դեմ առ դեմ հանդիպում են խիզախների խմբին։ Սկսվում է անհավասար և կատաղի մարտ։ Մոտակա Արգինե գյուղից թշնամուն օգնության է գալիս մաուզերիստների մի նոր խումբ՝ 40—50 հոգուց բաղկացած, որի շնորհիվ հակառակորդի ուժը մի քանի անգամ գերազանցում է ապստամբների ուժին։ Ապստամբների դրությունը դառնում է կրիտիկական։ Մահացու վերք է ստանում ապստամբների ղեկավար Ղուկաս Հուկասյանը. նրանց շարքերը աստիճանաբար նոսրանում է, փամփուշտը վերջանում, խիզախները սկսում են կռվել նռնակներով։ Թշնամին նույնպես կորուստներ է ունենում, բայց նա թվական գերազանցություն ունենալով, շարունակում է մարտը, որի ելքը վճռվում է հօգուտ հակառակորդի։

Այդ կարճ, բայց կատաղի մարտի և ապստամբների հերոսական դիմադրության մասին հետաքրքրական նյութեր է տալիս Կարսի ապստամբության մասնակից Լ. Ղազարյանը։

«Մազրա գյուղի քահանայի խմբի հետ ունեցած կռիվը վերջանալուց հետո շարունակեցինք մեր ճանապարհը և այդ ամբողջ օրն ու գիշերը ճանապարհ գնալով, մայիսի 14-ի առավոտյան հասանք Արգինե գյուղի ջրաղացներին, որտեղ կանգ առանք հանգստանալու...

Պետք է ասել, որ բոլորս սաստիկ հոգնած էինք, անքուն և քաղցած։ Մենք համոզված էինք, որ այդ տեղն արդեն ապահով է, Ալեքսանդրապո-

լին մոտիկ է և այլևս դաշնակցականներից վտանգ չկա։ Մոտավորապես 50—55 բոպե ջրաղացի մոտ մնալուց հետո, հանկարծ նկատեցինք կարսի կողմից եկող երկու բեռնատար ավտոմեքենա՝ լիքը մաուզերիստներով, որոնք գնում են դեպի Ալեքսանդրապոլ։ Մեզ նկատելով, նրանք մեքենաները կանգնեցրին, շտապ իջան և սկսեցին կրակել մեզ վրա... մենք այդ բոպեին, իհարկե, չէինք սպասում թշնամու հարձակմանը. ջրաղացների մոտ հասնելով, մեր ընկերներից մի մասը նստել էր հանգստանալու... Ահա այդ դրությամբ մեզ վրա հարձակվեցին մաուզերիստները, մենք, իհարկե, պատասխանեցինք։ Տեղի դրությունը մեզ համար չափազանց աննպաստ էր, հարմար դիրքեր չունեինք, գլխավորապես որպես ամրություն մեզ համար ծառայեց ջրաղացի հետևի պատը, որտեղից և մեր ընկերները կրակում էին։ Մոտավորապես 10—15 բոպե կրակելուց հետո, մաուզերիստներին օգնության հասան հարևան գյուղից եկած զինված խմբերը, որոնք կլինեին մոտավորապես 40—50 հոգի։ Դրանց գալուց հետո դեպի Ալեքսանդրապոլ մեր անցնելու ճանապարհը բոլորովին փակվեց, թշնամու ուժերը կրկնապատկվեցին, իսկ մեր փամփուշտները, ընդհակառակը, սկսեցին վերջանալ։ Այսպիսով, մոտ մեկ ժամ կռվելուց հետո մեզանից մի քանի հոգի սպանվեցին, մի քանիսը գերի բռնվեցին, իսկ մի քանի հոգի նահանջելով, դեպի մոտակա բլուրը... ազատվեցին...»[1]։

Նույնն են հաստատում ականատես գյուղացիները, որոնք պատմում են, որ կռվի ընթացքում բոլշևիկները թեպետ բոլորովին անհարմար և աննպաստ դիրքեր ունեին՝ օգտագործում էին ջրաղացի ետևի պատը և առուները, սակայն կարողանում էին կանգնեցնել մեծ թիվ կազմող հակառակորդի հարձակումը։

Ապստամբների հերոսական դիմադրության մասին, ջրաղացում եղած գյուղացիներից մեկ ուրիշը պատմել է.

«Բոլշևիկների փամփուշտները աստիճանաբար վերջանում էին, նրանք հարձակվող թշնամու վրա սկսեցին նետել ձեռքի նռնակներ։ Մենք տեսնում էինք, թե ինչպես փիրվալեցի բոլշևիկ Սուրեն Օառուկյանը ջրաղացի առվի միջից կրակում էր. սակայն փամփուշտները վերջանալուց հետո հրացանը նետեց և սկսեց կռվել ձեռքի նռնակներով, բայց այդ ևս վերջացավ։ Մաուզերիստները շրջապատեցին բռնեցին նրան, դուրս քաշեցին ջրի միջից և ջրաղացի դռանը գնդակահարեցին»[2]։

Այդ նույն ականատես գյուղացիները Ղուկաս Ղուկասյանի գնդակահարման մանրամասնությունների մասին պատմում են հետևյալը.

«Բոլշևիկների փամփուշտը վերջանալու հետևանքով նրանց կրակոցները աստիճանաբար լռում են։ Դաշնակցական մաուզերիստները քայլ առ քայլ մոտենում են ջրաղացին։ Նրանք սկսեցին կրակել ջրաղացի փակ դռան վրա։ Ջրաղացպան Միսոն վախենալով՝ բացեց ջրաղացի դուռը։ Հանկարծ ներս մտան ութ-տաս հոգի դաշնակցական մաուզերիստներ, որոնք տեսնելով պատի մոտ ընկած վիրավոր բոլշևիկին (Ղ. Ղուկասյանին), որը մոտ 20—22 տարեկան թխադեմ երիտասարդ էր, անմիջապես տեղն ու տեղը գնդակահարեցին»[3]։

---

1 ՀԱՄԿ(բ)Պ ԿԿ-ին կից Մարքսի—Էնգելսի—Լենինի ինստիտուտի Հայկական ֆիլիալ, ֆոնդ 10, գործ 1, թերթ 4։
2 Նույն տեղում, գործ 2, թերթ 4։
3 Նույն տեղում։

Այդ անհավասար մարտում ընկնում են Կարսի ապստամբության ղեկավար ու կազմակերպիչ Ղ. Հուկասյանը և նրա մարտական ընկերներ՝ Սուրեն Ծառուկյանը, Հովհաննես Մանուկյանը, Դուրգեն Դուզճակատյանը, Բերոր Խաչատրյանը, Ցավրակովը և Խրիստովսկին։ 11 ապստամբներ ընկնում են հակառակորդի ձեռքը, իսկ մնացածները կռվով նահանջում են։

Ալեքսանդրապոլի և Կարսի բանվորների ու զինվորների հերոսական ապստամբության լուրը, լայն արձագանք գտնելով ամբողջ երկրում, ոտքի է հանում աշխատավորական լայն մասսաներին։ Ապստամբություններ են բռնկվում Նոր Բայազետի գավառում, Ղազախ-Շամշադինում, Դիլիջանում, Զանգեզուրում և մյուս վայրերում։ Մի շարք քաղաքներում և շրջաններում՝ ինչպես, օրինակ, Իգդիրում, Ղարաքիլիսայում (Կիրովական), Կաղզվանում, Ղամարլվում (Արտաշատ) և այլ տեղերում ստեղծվում է լարված դրություն. բանվորները, աշխատավոր գյուղացիները անսահման ատելությամբ լցված դեպի դաշնակների և օտարերկրյա գաղութարարների անտանելի լուծը, տոգորվում են ապստամբական տրամադրությամբ, սակայն Ալեքսանդրապոլի և Կարսի ապստամբության ճնշումը կանխում է հիշված վայրերում ապստամբության բռնկումը։ Ամենուրեք սկսվում են կոմունիստների, ղեկավար ռևոլուցիոներների ու գյուղացիների ձերբակալություններ։

* * *

Կարսի բանվորների և զինվորների ապստամբությունը հանդիսանում է 1920 թվականի մայիսին Հայաստանում տեղի ունեցած ապստամբության վառավոր էջերից մեկը, որը, ինչպես ամբողջ Հայաստանում, այնպես և Կարսում ցույց տվեց, որ աշխատավորները այլևս չէին ուզում հանդուրժել անգլո-ամերիկյան իմպերիալիզմի գործակալ դաշնակների մաուզերիստական տիրապետության լուծը, ցանկանում էին հաստատել աշխատավորների իշխանություն՝ սովետական կարգեր։

Կարսի բանվորների և զինվորների ապստամբությունը սերտ կերպով կապված էր ամբողջ երկրում ծավալվող ռևոլուցիոն իրադրությունների հետ, առաջին հերթին Ալեքսանդրապոլի աշխատավորների պայքարի հետ։ Ուստի Կարսի ապստամբության ճնշման պատճառները պարզելիս, անհրաժեշտ է նկատի ունենալ մի շարք հանգամանքներ։

Հայաստանի ռազմա-ռևոլուցիոն Կոմիտեի և Արմենկոմի կողմից թույլ տրված սխալներն ու վրիպումները բացասական նշանակություն ունեցան ապստամբության ընթացքի վրա։ Նախ՝ տարբեր վայրերում ապստամբությունները սկսվեցին տարբեր ժամանակ, մեկը մյուսից անջատ, մյուս կողմից Ռազմա-ռևոլուցիոն Կոմիտեն հարձակողական տակտիկայի փոխարեն անցավ պաշտպանողական տակտիկայի, որն ապստամբության համար մահ էր։ Ընկեր Ստալինը ասում է, որ «Մարքսի կարծիքով, ով ապստամբության հաղթությունն է ուզում, նա պետք է հարձակման ուղին բռնի... Իսկ ինչ վերաբերում է համարձակ հարձակողական գործողություններին, ապա այդ, Մարքսի կարծիքով, ամեն մի ապստամբության միսն ու արյունն է»[1]։ Ալեքսանդրապոլում, Կարսում և մի քանի այլ վայրերում իշխանությունը վերցնելուց հետո թշնամին մինչև վերջը չախչա-

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 1, էջ 274—275։

խիչ հարված չստացավ։ Այդ սխալ քաղաքականությունը մեծապես վնասեց նոր հաստատված իշխանության ամրապնդման գործին։ Ապստամբ քաղաքների ու շրջանների ուժերի համատեղ գործողություններ չծավալվեցին, թշնամուց չխլվեց հարձակման նախաձեռնությունը։

Կոնտրռևոլուցիայի համեմատությամբ ռևոլուցիոն ուժերի բացարձակ գերակշռություն ունենալով հանդերձ, Արմենկոմը և Ռազմա-ռևոլուցիոն Կոմիտեն չպլանավորեցին հետագա գործողությունները, չմշակեցին ճակատամարտերի տակտիկա։

«Ապստամբությունը շահելու համար,—սովորեցնում է ընկեր Ստալինը,— անհրաժեշտ է նախապես կռվի պլան կազմել, նախապես ճակատամարտի տակտիկա մշակել, անհրաժեշտ է կազմակերպված ջոկատներ ունենալ և այլն»[1] մի բան, որ բացակայում էր մայիսյան ապստամբության ժամանակ։

Վճռական հարձակումը թշնամու դեմ, համարձակ գործողությունները ապստամբության հաղթանակի կարևորագույն նախապայմաններն են, որ չիրականացվեցին։

Այդ բոլորի հետևանքով՝ սկզբից գլուխը կորցրած թշնամին օգտվեց ապստամբության ղեկավարության հապաղումից և, ուշքի գալով, անցավ հարձակման։

Մայիսյան հերոսական ապստամբությունը ճնշվեց, բայց թշնամուն չհաջողվեց և չէր էլ հաջողվի կասեցնել աշխատավորների հետագա պայքարը հանուն սովետական կարգերի հաղթանակի Հայաստանում.

Բազմաչարչար հայ ժողովրդի ազատության, նրա գալիք փառավոր ապագայի համար մղված հերոսական պայքարում ընկան իրենց ժողովրդին, Լենինի-Ստալինի փառապանծ պարտիայի մեծ և անպարտելի գործին ու սովետական կարգերին նվիրված հարյուրավոր աննըկուն մարտիկներ, սակայն նրանց գործը մնաց կենդանի, նրանց պայքարը շարունակվեց։ Այն շարունակեցին հազարավոր կոմունիստներ, որոնք խտացրել էին Հայաստանի կոմունիստական պարտիայի շարքերը։ Այդ պայքարը շարունակեց ինքը՝ ժողովուրդը։ Ռուս մեծ ժողովրդի, նրա փառապանծ բանակի եղբայրական օգնությամբ, հայ ժողովրդի ազատարարներ Լենինի ու Ստալինի անմիջական ղեկավարությամբ, Լենինի-Ստալինի գինակիցներ Ս. Օրջոնիկիձեի և Ս. Մ. Կիրովի գլխավորությամբ Հայաստանի աշխատավորները 1920 թվականի նոյեմբերին տապալեցին դաշնակների արյունոտ տիրապետությունը, երկրից դուրս շպրտեցին անգլո-ամերիկյան գաղութարարներին և նվաճեցին իրենց ազատությունը։

Երկրում հաստատելով սովետական իշխանություն, Հայաստանի աշխատավորները, կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ և ՍՍՌՄ-ի բազմազգ եղբայրական ժողովուրդների մեծ ընտանիքում անցած 32 տարիների ընթացքում Հայաստանը դարձրին առաջավոր ինդուստրիայի և գյուղատնտեսության երկիր, բուռն ծաղկման հասած գիտության ու կուլտուրայի երկիր։ Համկ(բ)Պ Կենտկոմի և անձամբ ժողովուրդների մեծ առաջնորդ ընկեր Ստալինի գլխավորությամբ հայ ժողովուրդը Սովետական Միության մյուս ժողովուրդների հետ միասին գնում է դեպի կոմունիզմ։

---

[1] Ի. Վ. Ստալին. Երկեր, հատ. 1, էջ 272։